«Երևանի Գայի / Հայկ Բժշկյանց / անվան հ. 129 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի
կոլեգիալ կառավարման խորհրդի
Արձանագրություն հ. 9

Նիստը գումարվել է 2022թ. մարտի 22-ին:

Նիստին մասնակցում էին խորհրդի 9 /ինը/ անդամներից 8-ը /ութը/, բացակա 1-ը՝ Հիդա Գենրիխի Մելքոնյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչ Զինա Խաչատրյանը և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հանրակրթության վարչության ներկայացուցիչ՝ Միտալինա Սարգսյանը:

Օրակարգում՝

«Երևանի Գայի / Հայկ Բժշկյանց / անվան հ. 129 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի մրցույթ /ընտրություն/:

Լսեցին

/Զեկուցող՝ կառավարման խորհրդի նախագահ Ն.Ա. Միքայելյան/

«Երևանի Գայի / Հայկ Բժշկյանց / անվան հ. 129 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի մրցույթի /ընտրություն/ մասին:

Դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար դիմել էր երկու հավակնորդ՝ Անուշ Կոլյայի Մարտիրոսյանը և Անուշ Ստյոպայի Պետրոսյանը:

Տնօրենի հավակնորդները ներկայացրեցին 2022-2027թթ. դպրոցի զարգացման ծրագիրը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04. 03. 2010թ. N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության ընտրության /նշանակման/ կարգի պահանջները և «Երևանի Գայի / Հայկ Բժշկյանց / անվան հ. 129 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 33-րդ կետը, հաստատության կառավարման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Ելնելով բաց քվեարկության արդյունքներից «Երևանի Գայի / Հայկ Բժշկյանց / անվան հ. 129 հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի գործադիր տնօրենի մրցույթում հաղթող ճանաչել Անուշ Կոլյայի Մարտիրոսյանին:

   Քվեարկության արդյունքները՝

   1.Պետրոսյան Անուշ Ստյոպայի - 1 կողմ , 1 ձեռնպահ , 6 դեմ

   2.Մարտիրոսյան Անուշ Կոլյայի - 1 դեմ , 1 ձեռնպահ , 6 կողմ
2. Երկու աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել լիազորված մարմնին՝ ներկայացնելով նիստի արձանագրությունը, ընտրված տնօրենի՝ Անուշ Կոլյայի Մարտիրոսյանի անձնական գործը, փաստաթղթերը և ներկայացուցչի եզրակացությունը:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Նաիրա Միքայելյան

Քարտուղար՝ Լիլիթ Հարությունյան